

**ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ԾՆՎԱԾ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**ՍԵՐԳԵՅ ՌԱՍԲԱՐՉՈՒՄՅԱՆ
Ակադեմիկոս**

**20 ՕՐ ԱՄԵՆԱՅՅ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԴԵՏ**



**Սերգեյ Համբարձումյանը Վեհափառ Հայրապետի հետ
Սինգապուրի հայոց եկեղեցու առջև**

2002 թվականի նոյեմբերի 20-ից մինչև 30-ը Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի՝ Նոռավոր Արևելք (Թալիանո, Ավստրալիա և Սինգապուր) կատարած Հայրապետական այցելության ժամանակ պարիվ եմ ունեցել լինելու Վեհափառ Հայրապետի շքախմբում:

Շորվածն այս նպատակ չունի ընթերցողին ներկայացնելու այդ ուղևորության մանրամասները: Իմ նպատակը Հայրապետական այցի ժամանակ ծագած և կամ հսկակեցված այն միջերի սեղմ շարադրանքն է, որոնք, ըստ իս, պետք է հերաքրքրեն «Էջմիածին» ամսագրի ընթերցողին:

Ես ինձ համարում եմ այդ միջերի համահետինակը, քանզի դրանք ձևավորվել են Վեհափառ Հայրապետի մագուցած Պատրագների, եկեղեցական արարողությունների, հավաքացյալ հայորդիներին ուղղված քարոզների և աղոթքների, հասարակական վայրերում հարկապես դայրոցներում ունեցած ելույթների, վերը թվարկած երկրների հոգևոր և աշխարհիկ առաջնորդների հետ ունեցած զրոյցների ազդեցությամբ, և կամ ուղղակի Վեհա-

փառ Հայրապետի միքերն են՝ բերված իմ շարադրանքով։ Ի դեպ, շատ եմ կարևորում նաև մեր բազմաժամյա թեմադիկ երկխոսություններն ու ազագ զրույցները։

* * *

Մենք հաճախ ենք խոսում հայոց ազգի և հայ ժողովրդի մասին։ Դա բնական է՝ փոքրաթիվ, բայց բարձր ինքնելեկուուալ ներուծ ունեցող ազգերի միավորականությունը հաճախ է խոսում իր ազգի և ժողովրդի մասին։ Նոու լինելով այդ հասկացությունները սահմանելուց՝ կարծում եմ, որ ժողովուրդը ազգ է դառնում, եթե նա ունի դարերից եկած ուրույն գիտություն, կրթական բարձր վարկանշ և ավանդույթները պահպանող մշակույթ։ Բայց այդ բոլորը դեռ քիչ է։ Նա պետք է ունենա նաև այդ ամենը համախմբող հավաքական մի գաղափար։ Ըստ իս, այդ հավաքական գաղափարը հավաքն է։ Մեզ՝ հայերին համար դա քրիստոնեությունն է՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և նրա հոգևոր կենտրոն Սայր Աթոռ Սուրբ Էջմիածինը։ Այս հասկացությունների շուրջն է, որ դարեր ի վեր համախմբվել են աշխարհով մեկ սփոված հայորդիները՝ դառնալով աշխարհում ճանաչված մի ժողովուրդ։ Անշուշտ, պետք է հպարփանալ անցյալի նվաճումներով, բայց դրանցով սահմանափակվելը վիտանգավոր է։ Պետք է հենվել հնի վրա, սրեղծել նորը և դեսնել ապագան, այլապես մի փխուր օր հին և քաղաքակիրթ ազգից կվերածվենք հնացած ժողովրդի՝ զինելով ազգ։

* * *

Հայրենիքի դադարկապորդ գովերգանքը քաղաքակիրթ ժողովրդին սազական չէ։ ճարգարախոսական հայրենասիրությունը միայն խոսք է, ժողովրդի կողմից գերապարված գաղափարի սահուն ու գեղեցիկ շարադրանք, լոկ դադարկ խոսք՝ բաժականապայի ձևակերպումով։ Հայրենասիրությունը բանաձևելու կարիք չունի. նրանով պետք է ապրել գործել և արարել։ Մենք՝ բոլոր հայերս, միասին պետք է անցնենք մեր մեծ դժվարություններով լի ճանապարհը, որն, անկասկած, դանելու է մեզ լուսավոր և բարիքներով լի Հայաբան։ Երկիր հայրենի, որն անվերապահորեն Սայր Հայրենիքն է բոլոր հայերի։

Մեր ժողովրդի սրեղծարար ուժը, հանճարեղ միտքն ու կառուցող բազուկը, որոնք գորգած են կենսահասպատ ոգով և հաղեցի կամքով, հոյս ու հավաք են ներշնչում մեր լուսավոր ապագայի նկարմամբ։ Մենք այսօր ապրում ենք իմաստավորված կյանքով. ապրում ենք արարելու համար, քանզի արարիչ կյանքն իմաստավորված անմահություն է։ Պետք է ապրել ու արարել անմահության համար։ Սա է հաղթող ժողովրդի ճիշդ նշանաբանը։

* * *

Մենք անցել ենք երկար ու ծանր պարմական ուղի՝ լի կորուսդներով ու ձեռքբերումներով։ Հասել ենք մեր երազանքի իրականացմանը. ունենք ազագ, անկախ պետություն, պե-

դություն՝ Հայոց՝ Հայաստանի Հանրապետություն։ Այս պարմական գործմարդում հաղթող է դուրս եկել հայ ժողովուրդը, քանի որ դարերի ընթացքում պահպանել է իր լեզուն, ավանդույթները, հավաքը և հաղթելու կրուվը։ Հաղթանակը պետք է ամրապնդել, որին՝ առնվազն պետք է սիրենք ու գործորդներ մեր հանրապետությունն ու մեր ժողովորդին։ Այսօր ամեն մի հայի հոգում պետք է վառ լինի Մայր Հայրենիքը, մոքում մեր Սուրբ հայոց լեզուն, իսկ ազքերում Աստվածաշեն Սուրբ Էջմիածինը։ Մի՛ դավաճանեք այս զաղափարներին, սրանք են մեր ազգի գոյագրւան և անվագության գրավականները։

* * *

Սփյուռքահայությունը Մայր Հայրենիքի առաջնաթացին պետք է օգնի համագործակցությամբ։ Հայրենիքին ցուցաբերած բարեգործությունը մեծ առաքինություն է և միշտ բարձր է գնահատվում ժողովորդի, Եկեղեցու և պետության կողմից։ Բայց լոկ բարեգործության ժամանակներն անցել են։ Այսօր պետք են զործարար կապեր։ Այսօր սփյուռքահայերն իրենց քրիստոն ու արյուն պետք է շաղախնեն մեր ընդհանուր գործին՝ Հայաստանի Հանրապետության գործին, հայեցի ապրելու գործին, ազգային անվանագության գործին։

* * *

Ամեն մի սփյուռքահայ, որն ապրում է աշխարհի այս կամ այն երկրում մշտական թե ժամանակավոր, ամեն մի հայ, որն ապրում է Մայր Հայրենիքում և մեկնում է արքասահման գործով կամ հյուր, հանդիսանում է Հայաստանի և հայության լիազոր ներկայացուցիչը այդ երկրում։ Նա դեսպանն է Մայր Հայրենիքի և մեր ազգի, ուստի նա իր առաքինի կյանքով, մարդկային բարձր հագույքուններով ամեն օր պետք է ցույց փա իր շրջապատին, որ հայերը քաղաքակիրթ, աշխարհական, սրբեղջագործող, օրինապաշտ և սարվածասեր ժողովուրդ են՝ դարերից եկող և դարեր գեացող առաքինություններով և ավանդույթներով։ Այս ոգով էլ պետք է մեծանան հայ մանուկները, քանզի ամեն մի հայեցի մեծացած մասուկ մեր ազքում մի Հայաստան է։

* * *

Ամեն մի հայ, ուր էլ որ գրնվի, հոգով, սրբով և գործով անքակիւնիորեն կապված պետք է լինի Մայր Հայրենիքի հետ։ Մենք պետք են լինենք մի ամբողջություն, մի մարմին, մի սիրու, մի հոգի։

Այսօր հայ ժողովորդի ուժը պետք է փնտրել նրա՝ աշխարհով մեկ սփուզած լինելու մեջ՝ համոզված լինելով, որ անհրաժեշտության դեպքում նա ի զորու է համախմբվելու Մայր Հայրենիքի շուրջը։ Ի դեպ, այսօր ժամն է համախմբվելով՝ հենվելով հայոց պետքականության, գիտության, կրթության ու մշակույթի ամուր սյուների վրա, որոնք լուսավորված են Սուրբ Էջմիածնի անսպառ լույսով։ Միայն համագործակցելով մենք կկառուցնենք հզոր հայ-

բնիք, որի համար Սուրբ Էջմիածինը խղճի խորհուրդն է, իսկ բիբլիական Մատիսը՝ պետականության:

*

* * *

Սուրբ Էջմիածինը Մայր Տաճար և կամ Մայր Աթոռ չեն միայն, լոկ սրբագիտի չեն կամ աղոթավայր: Նա հայության սիրով է, երա աննկուս ոգին. Դայոց միաբանության ասրբածարուր պահապանը: Նա Ասպծո կողմից ժողովրդին շնորհված հոգևոր արժեքների շրեմարանն է անսպառ: Նա տեսիլը է ամեն մի հայի համար, խորհրդանիշը հայ ժողովրդի:

*

* * *

Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին հայ ժողովրդի պարմության, դարավոր մշակույթի և ավանդույթների կրողն ու պահպանողն է:

Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Ասպծո պարզեց հայոց լնգուն պահպանում է որպես մասունք Ասպարագին, որպես զորավոր ուժ հայապահպանության:

Նայ Առաքելական Եկեղեցին դպրոց է, որ մարդու հաղորդվում է Ասպծու հետ, կերպարանափոխվում մոգենալով հոգևոր արժեքների գերապարփության վեհ զաղափարին: Նա մարդուն հանգեցնում է այն բարձր գիտակցությանը, որ Ասպարագ ու հավաքքն են դառնում կյանքի հոյս և ապավեն:

Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մարդուն հաղորդակից է դարձնում համամարդկային հոգևոր արժեքներին, հասու դարձնում դրանք գիտակցարար ընկալելու գերաշնորհին և օգնում դրանք ի սպաս դնելու ի զորություն մարդու հոգևոր կյանքի:

Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին օգնում է ամեն մի հայորդու՝ ապրելու հայեցի, պայքարելու, ամրապնդելու Նայոց Նանրապետության անկախությունը և բազմապարկելու ձեռք բերած հաջողությունները:

*

* * *

Մեզ պետք են ժողովրդի կողմից սիրված կրթյալ ու գիտակ հոգևորականներ: Մեզ պետք են Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցու այնպիսի սպասավորներ, որոնք ի զորու են հոյս, հավաք ու սեր ներշնչելու հայ ժողովրդին առ Ասպարաց, Ավելարանի կենսապարզն խոսքին հավաքարիմ պահելու իրենց վսփահված Քրիստոսի հոգին, ճիշդ ճանապարհի բերելու անորոշությունների մեջ մոլորված հայորդիներին:

Ժողովրդին պետք է սպասավորնեն միայն ազնվագույն հոգևորականները, որոնք արժանապարփությամբ կվագրաբն Ասպծո կողմից իրենց վրա դրված պարտականությունները: Այնժամ կրօնական այլածին հոսանքներն ու հիվանդագին գաղափարները չեն խոռվի ժողովրդի ազնիվ զավակների հոգիները:

*
* *

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկն է, եզակի անձ, Ասքծո ընփրյալ: Նա Հայրապետն է ողջ հայության՝ հավաքացյալ և ոչ հավաքացյալ: Կաթողիկոսությունը առաքելություն է, որն Ասքված դրել է մի մարդու վրա, որպեսզի նա հույս հավատ ու սեր սփոխ իր ժողովրդին, լուսավորի երա ճանապարհը՝ հաղթող դրս բերելով ամեն մի փորձությունից: Նրա սերն անսահման է առ ժողովրդը, որին նա ուղղորդում է՝ ապրելու Ասքծո կողմից սահմանված կանոններով: Ամենայն Հայոց Կաթողիկոս ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այն հիասքանչ մեծություններն են, որ իրենց ներուժով և Ասքվածային խորհրդով ապահովում են ողջ հայության միաբանությունը:

*
* *

Տակայական է Եկումենական շարժման դերն ու նշանակությունը խաղաղության և ժողովուրդների բարեկամության գործում: Այդ շարժմանը ակրիվորեն մասնակցում են Հայ Առաքելական Եկեղեցին և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Ս. Գարեգին Բ-ն՝ ընդումին պահպանելով մեր Եկեղեցու անկախությունն ու դարերից եկող ավանդույթները: Այս առումով հիանալի էին Եկումենիկ ժամերգությունները Սիդնեյի և Մելբուռնի կաթոլիկ Եկեղեցիներում, որը հնեցին Կոմիտասն ու Եկմայլանը, որ «Հայր մեր»-ն արքասանվեց նաև հայերեն մեկ ընդհանուր Եկեղեցական արարողության ընթացքում, որը հավաքվել էին ավագրալացի և հայ հավաքացյաները:

Քոյք Եկեղեցիների բարեկամության և համագործակցության մի հիանալի օրինակ էր նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի «Պահպանիչ» աղոթքը և «Ամեն հայի սրբութից բխած» Հայրապետական մաղթերզը, որոնք հնչեցին Մոսկվայի Քրիստոս Ամենափրկիչ տաճարի (Խրամ Հրիստա Սուսանա) կամարների դրակ՝ ի ապաքինում Ռուսիո Պարուիարք Ալեքսի Բ-ի:

Արարողությունը գեղեցիկ էր և հուզիչ: Հայ դասական հոգևոր երգը, որ կարարեցին Եզրա եպիսկոպոս Ներսիսյանը, Վազգեն վարդապետ Միրզախանյանը, Գեղարդ արեդա Վահունին և Զագրոսկի հոգևոր ակադեմիսայի սան երկու երիտասարդ հայ հոգևորականները, աներևակայելի կերպով գրավեց դաճարում գինովովների ուշադրությունը, իսկ մենք՝ հայերս, մոռացած ամեն ինչ, դարձել էինք այդ հրաշագեղ արարողության մի մասնիկը:

20 օր անց ապաքինված Ռուսիո Պարուիսայում Բարվիսիայում ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ընդունելության մասին հաղորդեց Մոսկվայան հեռուստագետներունը. ի դեպ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը հաղորդվեց հայերեն՝ համապատասխան բացապրություններով: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջին հոգևոր առաջնորդն էր, որին Ալեքսի Բ-ն ընդունեց ապաքինվելուց հետո:

Եվ պարտահական չեր, որ Սինգապուրի օդանավակայանում Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեց և հաջորդ օրը ճանապարհեց Ռուսասրանի Դաշնության դեսպան պրն Ա. Կիսեռովը:

Մեծ է Եկեղեցու դերը ժողովուրիտների բարեկամության ամրապնդման գործում:

*
* *

Քանզկոկի, Սինգենի, Մելրուսնի, Սինգապուրի հայության և Շեռավոր Արքեպիսկոպոսի այլ բնակավայրերում ապրող այն հայերի համար, որոնք ժամանել էին վերոնշյալ քաղաքներ՝ Վեհափառ Հայրապետի հետ հանդիպելու, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ո.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի Հայրապետական այցը Շեռավոր Արքեպիսկոպոսի հիրավի, գուն էր: Դա ժողովրդի մի նոր հոգևոր լիցքավորում էր, ազգային զգացմունքների զարթոնք: Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական ուղևորություններն Ասրբածային խորհուրդ են պարունակում:

*
* *

Հանդիպումներից մեկի ընթացքում հերլյայ հարցը ծագեց՝ պասկադրության ժամանակ քահանայի հարցը ապագա ամուսնուն՝ «Տե՛ր ես», և ապագա կնոջը՝ «Նազա՞նդ ես», արդյոք չե՞ն նսեմացնում կնոջ դերը ապագա ընդունելու առողջությունը: Պարտասխանը միակն էր՝ ոչ, իհարկե՞նք: Չե՛ որ դա միայն դարերից եկող ծիսակադրության պայմանական ձևն է և ոչնչով չի նսեմացնում կնոջը: Հայկական առողջ ընդունելու թե՛ ամուսինը և թե՛ կինն իրենց ողջ կյանքում պետք է իրար «գերե» լինեն ու «հնազանդ»: Եկեղեցու կողմից օրինված ամուսնությունը կոչված է դառնալու ամուր և երջանիկ ընդունելի փոխադարձ սիրո, հարգանքի ու հավաքի Ասրբածային երաշխիքը:

Հարց ծագեց նաև միասնականության մասին: Այս դեպքում ևս պարտասխանը միանշանակ էր: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին միասեռ «սերը» չի ընդունում: Այն չեն ընդունում նաև Ավետարանը մեր և Ասրբած: Այլապես Ասրբած կսրբեղծեր երկու Աղամ և Երկու Եպա:

*
* *

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դարավոր պարմության ընթացքում հայ միավորականները՝ մեծանուն աշխարհական հայ գիլտնականներ, ճարդարապետության, արվեստի և գրականության գործիչներ, իրենց մասնագիտական և հասարակական գործունեությամբ սերպորեն կապված են եղել Հայ Եկեղեցու հետ: Շագերն իրենց կրթությունը սրացել են Հջմիածնի Գևորգյան Շոգևոր ճեմարանում: Հայ ճարդարապետների նախագծերով են կառուցվել մեր հոյակապ Եկեղեցիները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում են գրպագրվել մեր մի շարք անվանի գիր-նականների և գրողների անդրանիկ գործերը: Ուրույն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պագրկերասրահը: Մեր երգչախմբերն են աշխարհով մեկ տպարածել հայ հոգևոր երաժշգույթային գանձերը: Հայ մըրավիրականները միշտ մասնակցել են Համազգային եկեղեցական ժողովի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր խորհրդի աշխարհականներին: Եվ այս ամենը մեծ սիրով՝ ի փառ հայ ժողովրդի և նրա հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

* * *

Այսպիսով, հակիրճ և խրացած ձևով շարադրվեց այդ 20 գեղեցիկ օրերի ընթացքում ծագած կամ հսկակեցված բազում մտքերի լոկ մի մասը և հուշագրական մի քանի պատրիկ:

Ընթերցողին թող չզարմացնի շարադրանքի վերամբարձ ոճը. այն թելադրված է շարադրված մտքերի բովանդակությամբ: Տեղին չէր լինի այժմարձված հարցերի մասին հրապարակախոսական հոդվածում խոսել ակադեմիական ոճով: Ի դեպ, նպարակ չէր դրված փալու շարադրված մտքերի գիրական հիմնավորումները: